ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ Մ Ա Ր Զ

ԳՈՄՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

17.03.2016թ **գ. Գոմք**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 1

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՄՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 Թ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ և ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ ՄԱՍԻՆ:

2016 թ Մարտի 17-ին Գոմք համայնքի մշակույթի տան շենքում տեղի ունեցավ համայնքային ժողով, որին մասնակցում էին Վայոց Ձորի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ պարոն Նորայր Սինոնյանը, համայնքի ավագանիներ Ն. Ավագյանը և Ն. Բաբայանը, համայնքի բնակիչներ, ակտիվ խումբի ներկայացուցիչներ և այլ հյուրեր:

Ժողովի հախագահ՝ Մ. Հովհաննիսյան, քարտուղար՝ Ա. Ղազարյան:

Օրակարգում

ժամը	գործողությունները	Ելույթ ունեցող
14.00 -14.10	Ողջույնի խոսք	Համայնքապետ Մ. Հովհաննիսյան
14.10-15.00	2015թ Գոմք համայնքի ղեկավարի գործունեության և քառամյա ծրագրի հաշվետվություն ներկայացում	Համայնքապետ Մ. Հովհաննիսյան
15.00-15.20	Հարց ու պատասխան	
15.20-15.40	Համայնքում իրագործվող գյուղատնտեսական ծրագրերի մասին	Ավագանի, <ՎԳԱ>ՄԿ-ի հախագահ Ն. Ավագյան
15.40-15.50	Համայնքի ակտիվ խմբի գործունեության հաշվետվություն	ՀԱԽԻ անդամ Հ. Հարությունյան
15.50-16.00	Հարց ու պատասխան, կարծիքներ, առաջարկներ	
16.00-16.10	Ելույթ	Ն. Սիմոնյան

1. Համայնքի ղեկավարի կողմից 2015 թ գործունեության և քառամյա ծրագրի հաշվետվություն մասին հանդես եկավ համայնքի ղեկավար Մ. Հովհաննիսյանը: Արձանագրվեց, որ հաշվետու ժամանակաշրջանում՝ 2015թ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը կատարվել են հետևյալ աշխատանքները՝
    - Հունվար - մարտ ամիսներին կատարվել է ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մաքրում ձյան ծածկույթից:

- Մարտ- ապրիլ ամիսներին կատարվել է ոռոգման առուների և խոխովակաշարերի մաքրում տիղմից և խճաքարերից:Ներհամայնքային ճանապարհների մասնակի բարեկարգում, փոսալցում:
- Ապրիլ - սեպտեմբեր ամիսներին ձեռնարկել ենք միջոցառումներ գյուղատնտեսական աշխատանքների՝ վարուցանքի, հունձի ճամանակին կատարման կապակցությամբ:
- Սեպտեմբեր –դեկտեմբեր ամիսներին մասնակցել ենք՝ ԱՌԴԻ -ով արոտների բարելավման ծրագրին, ԱՄՔՈՐ –ով գյուղատնտեսության զարգացման ծրագրին, Վիվասել մտս –ով ներհամայնքային փողոցների լուսավորության ծրագրին, SDA Ռազմավարական զարգացման ծրագրին, ԻՖԱԴ-ով մշակվել է խմելու ջրագծի նախագիծը և նախահաշիվը՝ վերանորոգման համար:

Արձանագրվեց, որ հաշվետու ժամանակաշրջանում հողի հարկի, գույքահարկի , տեղական տուրքերի և վարձավճարների գանձման գծով կատարվել են հետևյալ աշխատանքները
Եկամտային մաս.

	եկամուտներ	Պլանով նախատեսված	Փաստացի հավաքագրված
1	Հողի հարկ	700000	592723
2	Գույքահարկ	170000	219460
3	Տեղական տուրքեր	10000	9000
4	Հողի վարձավճար	100000	114000
5	Գույքի վարձավճար	205000	205000
6	Այլ եկամուտներ	423700	423700
7	Տարեսկզբի ազատ մնացորդ	530500	530500

Ծախսային մաս

		Պլանով նախատեսված	Փաստացի ֆինանսավորում
01/1/1	Գյուղապետարանի պահպանում	6713.3	6173.3
08/4/2	Այլ մշակույթային միջոցառումներ	86.0	60.6
04/5/1	Ճանապարային տրանսպորտ	59.9	0
04/2/1	Գյուղատնտեսություն	22.0	22.0
06/3/1	Ջրամատակարարում	15.0	15.0
01/3/3	Ընդհանուր բնույթի այլ ծառ	12.0	0

Քննարկվեց համայնքում իրականացված ծրագրերը, ելնելով քառամյա ծրագրում դրանց պլանավորումից:
Հաշվետու ժամանակաշրջանում գումարվել է ավագանու 10 նիստ և կայացվել է 35 որոշում:Ընդունվել է համայնքի ղեկավարի 12 որոշում:
Ներկայացվեց համայնքի առաջնահերթ և կարևոր խնդիրների՝ խմելու և ոռոգման ջրագծերի, ներհամայնքային ճանապարհների անմխիթար իրավիճակի մասին:
Արձանագրվեց ինչպես այս , այլ նաև մի շարք այլ խնդիրների մասին ներկայացնել մարզպետին:

Արտահայտվեցին՝ Ն. Սիմոնյանը, Ն. Ավագյանը, Պ. Պողոսյանը, Հ. Հարությունյանը, Ն. Բաբայանն, Ս. Ղազարյանը , Զ. Խաչատրյանը և ուրիշներ:

Առաջարկվեց

1.Համայնքի խեկավարի հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները համարել բավարար:

2.Համայնքի ղեկավարին հետևողական աշխատանքներ տանել համայնքի առաջնահերթ խնդիրների լուծման վերաբերյալ:

Ժողովի նախագահ_____Մ. Հովհաննիսյան
Քարտուղար _____Ա. Ղազարյան